

Մեր օրերի նահանջը

Պապիկյան Անի

Հանգուցային բառեր. *նահանջ, սփյուռք, գաղթական, օտարացում, արդիականություն, ձուլում, լեզու, գաղափար, բարքեր, պայքար, օտարամոլություն, հայ, հայրենիք:*

Եղեռնից հետո աշխարհով մեկ սփռված հայությունը ստեղծեց Սփյուռքը, և անդ հայտնված հայ գրողն էլ այնուհետ ճակատագրի քմահաճույքով պիտի կոչվեր «սփյուռքահայ գրող»:

Դեռևս նոր կյանքի պայմաններին ու միջավայրին չհարմարված գրողը ապրում, շնչում ու ստեղծագործում էր կարոտով: Կորսվողից, անհետացողից փշրանքներ փրկելու ձգտումը գրականություն վերադարձրեց գյուղագրությունը նոր յուրահատկություններով, և ձևավորվեց «կարոտի գրականությունը»: Այս գրականությունը սնվում էր հայրենիքից բերած հուշերով: Եվ «կըսեն, թե որքան հաճախակի ըլլա հիշատակներուն վերակոչումը, այնքան շուտ անցյալը կձևափոխվի, որովհետև ամեն անգամուն հիշատակներուն վրա կավելացնենք սուտ ու կեղծ տարր մը, որ կմնա» [5, 116]:

Բայց այդպես երկար շարունակվել չէր կարող: Ժամանակն էր, որ գրականությունը հանդգներ մխրճվել գաղութների առօրյա կյանքի մեջ և հանդգնեց: Գաղթահայը, որ «ազատ աշխարհ» էր եկել իր երազած կյանքի որոնումներով, գտել էր համատարած նահանջը, որն իր արտահայտությունը պիտի գտներ սփյուռքահայ գրականության մեջ: Հաշվի առնենք նաև կարևորագույն մի իրողություն. «Ամբողջ տնաքանդ ժողովուրդ մը թափուած էր Փարիզի մայթերուն վրայ յանկարծ, և այդ լոյս քաղաքի շառայներուն տակ կը ճանչնար իր խոշտանգուած՝ էութիւնը և մերկութեամբ կը հակադրուէր հօգօր մշակոյթի մը»: Ապա և՛ «Մշակոյթների տարբերութեանց բախումը միշտ մարդկային էութեան մեջ յեղաշրջումներ յառաջուցած» է [1, 6]: Սա է պատճառը, որ փաստվել է. «Շահնուրի մօտ այդ հակադրութիւնը ամբողջ տարբեր աշխարհներու բախում մըն է՝ օտարումի, այլուրացման եւ այլասերման իր սհաւոր հետեւանքներով» [1, 7]:

«Նահանջը առանց երգի». «Այս գիրքը նահանջ չնշանակէր» (Շահան Շահնուր):

Շահնուրի պատգամն էր. «Գրել այնպես ուժեղ ու գրիչը սեղմել այնքան զօրաւոր, որ մելանք թափանցե թուղթին ետին [1, 8]: Իր պատգամի առաջին կատարողը հենց ինքն էր և անջնջելի թափանցումով ու անմոռանալի դրոշմով գրեց իր ամեն մի գործը, էջը, տողը, տառը: Շահնուրյան այս անդրադարձում տազնապ կա, և կա անդրադարձի անհրաժեշտության գիտակցումը. «Ի՛նչ պետք, ի՛նչ պետք սակայն ըսել այս բոլորը, որ արդեն իսկ այսքան անգամներ կրկնված ըլլալու դժգոհությունը ունի: Ի՛նչ պետք մանավանդ զբաղիլ պարագաներով, որոնց լավագույն դարմանը բառերուն և խոսքերուն ուժը չի կրնար կազմել բնավ: Ոչ թե որովհետև այժմ պատերազմ կա ու կռիվ, ոչ թե որովհետև այժմ ճակատամարտ կա ու կենսապայքար, այլ որովհետև կա բան մը ավելի ճակատագրական, ավելի աններող, կա բան մը անհեղ, անդիմադրելի, որ իր անունը կոռնա բոլոր քառուղիներէն. նահանջն է ան: Նահանջը, նահանջը հայերուն» [5, 109]:

«Նահանջը առանց երգի» վեպը «Յառաջի» մեջ իբրև թերթոն տպագրվելուց հետո լույս տեսավ նույն 1929-ին առանձին հատորով և իր վրա սևեռեց քննադատության ու ընթերցողների ուշադրությունը, արժանացավ բուռն վեճերի, մերժումների և, ինչու չէ, նաև հիացումների: «Թեև հասկացուելու փափաքով ելա Շահնուր հրապարակ, սակայն բոլոր մեծերուն սահմանուած չհասկցուելու մերժումը ապրեցաւ ատեն մը» [1, 7]:

Հ. Գրիգորյանը նույնիսկ կարծիք հայտնեց, որ «Նա կոչ է անում հաշտվել գոյություն ունեցող իրականության հետ և ձգտել միապաղաղ ու գորշ գոյության» [2, 433]:

Գ. Քեոսեյանը իր հողվածներից մեկում գրեց. «Տարիներ է ի վեր, ամեն տարի ազգային, կուսակցական, անհատական պարտականութիւն կը համարուի փողոցէն անցնող-դարձող գրոց-բրոցի կողմէ... քար մը արձակել Շահնուրեան բերրի պողատանը» [2, 44]:

«Ժողովուրդը, մեծարելով հեղինակին, կմեծարե գաղափար մը, որ միաժամանակ առաջադրություն մըն է – գիտակցիլ օտարացման վտանգին և դեմ դնել անոր, – հետագայում վեպի ծնունդը բացատրել է հեղինակը: – Այդ գաղափարը ազգինն էր, իմս ըլլալէ առաջ: Այն կեռար ու կրորբոքեր գաղթական ժողովուրդին մեջ, երբ եկավ ու բյուրեղացավ զանազան երկերու մեջ, որոնցմէ մեկն էր միայն «Նահանջը...» [3, 313]:

Ժողովուրդը սիրեց այս վեպը, որովհետև այնտեղ տեսավ իրեն, իր անցյալի գործած սխալներն ու դրանց արդյունքը՝ ներկայի վիճակը, ուժացման վտանգը և նահանջի այդքան ուղիղ ձգվող ճանապարհը: Այս գործը նպատակ ուներ ոչ թե հաշտեցնել տառապած ու հուսահատ հոգիները իրականության հետ, այլ ցնցել ու սթափեցնել դրանք, պայքարի հանել:

Այս գործն այնքան արդիական է, որ կարող էր գրվել նաև այսօր բուն Հայաստանում, բայց գրվեց մի այլ՝ առավել բարդ ժամանակահատվածում, այլ իրողության և այլ տարածության մեջ: «Շահնուրի հերոսները կային գրութենէն առաջ ու կը շարունակէն ըլլալ անկէ ետք» [4], մեզ ներկայացվածը նրանց կյանքի մի հատվածն է միայն, բայց էականը իրողությունն է, իրողությունը նահանջի, որ սփյուռքահային համակարգում է մի հավաքականության մեջ և զրորում այն միակ ճանապարհով, որը սպասում էր յուրաքանչյուրին: «Մա նահանջը» «կջնջե, կձուլե, կանհետացնե ամեն բան» [5, 109]:

Հավանաբար ճիշտ էր Եր. Ազատյանի դիտարկումը, թե «ատենին չհասկցուեցաւ «Նահանջը», որովհետեւ շատեր չկրցան տեսնել Շահնուրի նախատեսած ազգային ճահիճը, քանի անոր մէջն իսկ էին արդէն» [1, 10]: Իսկ ճահիճը գնալով խորացավ: Գրողների մեծությունն էլ այն է նաև, որ երբեմն «Ժամանակից առաջ են անցնում», (Պ. Ս.) և դրանով իսկ մարգարեանում:

Մեր օրերում էլ կան բազում հեղինակներ, որոնք պատկերում են այսօրվա արտագաղթ-նահանջը Հովհաննես Երանյան, Հովհաննես Գրիգորյան, Հրայր Սարուխան, Դիանա Համբարձումյան, Էդգար Կոստանյան և այլք, քանզի դարերի պատմություն ունեցող այս երևույթը շարունակում է մնալ իրողություն:

Այսօր էլ նահանջը իրողությունն է, և, ի ցավ սրտի, պիտի նշենք, որ նահանջող է ոչ միայն սփյուռքահայը, այլև իր հայրենիքում՝ մայր հողի վրա, ապրող հայ մարդը:

Ու եթե օտար հողում ապրողի նահանջը կարող ենք արդարացնել նրանով, որ մեր ծիրը նոր հողը չսիրեց, օտար քամիներն էլ շատ ուժգին էին, նոր տերերն էլ ինքնակամ պատվաստ արեցին նրա անպաշտպան ճյուղերին, ապա մայր հողին պահ տված ծիրը իրավունք չունեւ օտար պտուղներ տալու, բայց տվեց:

Շահնուրի ստեղծած կերպարները այսօր էլ մեր կողքին են, մեր մեջ:

Անդրադառնանք նրա կերտած նահանջողների կերպարներին, և բնավ դժվար չի լինի նրանց մեջ գտնել մեր եղբայրներին, հեռավոր զարմիկներին, հարևաններին և, վերջապես, ինքներս մեզ:

Վեպի հերոսները գաղթական հայ տղաներ են՝ Պետրոս, Սուրեն, Հրաչ, Լոխում, Միսաք, Բարոյական չափանիշներից գուրկ ֆրանսուհիներ՝ Նենեթ- մադամ Ժանն, Մյուզի, Գաբի, «քաղաքակիրթ աշխարհի» տիպիկ կերպար Լեսքյուր և այլք, որոնք պիտի օգնության ձեռք մեկնեին՝ կատարելու նահանջի քայլը:

Հինգ ընկերների մեջ ամենից ավելի բարձր իմացականության տեր երիտասարդը Սուրենն է՝ գրող, մտավորական, իր ժողովրդի պատմությանը քաջատեղյակ մեկը, որի նկատմամբ ընկերները ակնածանք ու հիացում էին տածում: Նա հայրենիքի սիրով և ժողովրդի ապագայով մտահոգ անհատականություն է՝ մտածումի ու խորհրդածության մղող հերոս, որ, սակայն, խոսքը գործի չի վերածում և այդ ամենից հետո ինքն էլ է նահանջի քայլ անում՝ լույս ընծայելով իր առաջին գիրքը ֆրանսերենով: Նրա կարծիքով ձուլման պատճառները հեռու անցյալից են գալիս: Մեծ պատասխանատվություն վերցնելով իր վրա՝ կատարում է ընդհանրացումներ՝ կտրուկ ձևակերպումների մեջ, թե չունենք նկարչություն, թատերգություն, գրականություն, կեղծ է պատմությունը:

Նա հասկանում է, որ անկախության հույսը այլևս ի դերն է ելել, և այժմ դամոկլյան սուրը կախված է մեր ժողովրդի հիմնասյան՝ հայ ընտանիքի գլխին, որ հայ աղջիկը մնացել է հեռվում լքված ու միայնակ, որ հայ «երիտասարդը տեսավ ֆրանսիացի աղջիկը, գերմանացին, իտալացին, հույնը, ռուսը, օր մը անոր բույրը ծծեց, օր մը մյուսը, ... սիրվեցավ քանի մը անգամներ, մինչև որ ինքն ալ սիրեց օր մը, դուր մը ետևէն գոցելով» [5, 92]:

Սա կյանքի դուռն է, այն կյանքի, որ թողնում է գաղթականը իր ետևում՝ օր օրի մոռանալով այդ կյանքի այնքա՛ն հարագատ վարքուբարքը:

Սուրենը, ինչպես և մերօրյա գաղթականները, որպես մարդու հայ տեսակի ընդհանրացված կերպար, որքան էլ որ կյանքի թելադրանքով օտարության մեջ հայտնված լինի և օտար բարքերին ենթակա, չի կարող մոռանալ իր հայ լինելու հանգամանքը, որովհետև մենք ծնված օրից մայրական կաթի հետ երեխային սնուցում ենք «հայ», «Հայաստան», «հայրենիք», «հող հայրենի» հասկացություններով՝ դրանք ներմուծելով նրա գիտակցության ու ենթագիտակցության ոլորտ: Եվ որպես հայ մարդ՝ նա անհանգստացած է սփյուռքահայության վիճակով ու հետագա ճակատագրով: Եվ որպես տիպիկ հայ՝ նա փնտրում է մեղավորներին ու այս անգամ ամբաստանյալի աթոռին նստեցնում է Նարեկացուն՝ նրա «Մատյանը» համարելով «թունավորիչ հատոր» (Շ.Շ.), գտնելով, որ ժողովուրդը, դարեր շարունակ առաջնորդվելով քրիստոնեական վարդապետությանը նրա տված մեկնաբանություններով, դարձել է համակերպվող, ենթակա, չի պայքարել իր ազատության ու անկախության համար: Ապա արդարանում է, թե հայրենասերի տառապանք-

ներն են իր հախուռն մտածումի պատճառը, որ ուզում են գտնել մեղավորին: Այո՛, հայի բնութագիրը իր մեջ պարփակող կերպար է: Մենք սիրում ենք խոսել, մտքեր արտահայտել, պնդել, որ դրանք ճիշտ են, բայց երբեք այդպես չգործել, քննադատել, փնտրել մեղավորի, բայց մեղքը երբեք մեր մեջ չտեսնել:

Մուրերնը նահանջում է ոչ միայն լեզվով ու խոսքով (գրելով իր ֆրանսերեն գիրքը), այլև մտքով, գաղափարներով, էությանբ (նրա խոսքը ուղղված էր օտարներին, որոնք ժամանակ ու ցանկություն ունեին այն լսելու, իսկ հայը, որ դժվար ժամանակներ է ապրում, չունի ո՛չ մեկը, ո՛չ մյուսը): Նրան արդեն քիչ է անհանգստացնում այն հանգամանքը, որ «կարօտ», «մայր», «հայ», «աքսոր», «գաղթական» ու «որբ» բառերի համարժեքը ֆրանսերենում չկա, մեր ցավի թարգմանությունը չկա և ոչ մի լեզվում:

Ո՛վ է Պետրոսը: Տարագիր մարդու տիպական կերպար՝ աշխատավոր հայ ընտանիքի գավակ, որ թողել է իր օրրանը՝ երակների մեջ տանելով «արյուն մը մաքուր» (Շ.Շ.): Այդ արյան կանչն ու օրեցօր խամրող հուշերն են նրա մեջ կիսով չափ պահպանում հային:

Պետրոսը, որ, չանցած շատ ժամանակ, դառնում է Պիեր, կատարում է նահանջի իր քայլը՝ սիրահարվելով մադամ Ժանին, որ պատկանում է ուրիշին, վարում անբարո կյանք, երեխա ունի, որին լքել է, լուսանկարների մերկ բնորոշուհի է: **Մի բան, որ հայ աղջկան չէր ներվի:**

Այսինքն փոխվել է նրա մտածելակերպը, ապականվել՝ բարքերը, վերանայվել հայացքները:

Եղավ, որ ուզեց «փախչի՛լ, փախչիլ ինքզինքեն» [5, 108], եղավ, որ ատեց, սարսափելիորեն ատեց «քը Նենեթը» [5, 111] (ընդգծումը մերն է՝ Ա.Պ.), օր մը «լռեց, որովհետև նախ ավելորդ ու անօգուտ գտավ ատելությունը, որ միայն իր հոգին մրոտելու պիտի ծառայեր, իսկ ուրիշ պահու մը վախեցավ անկէ, որպէս թէ անեծքին ազդեցությունը անխուսափելի ըլլար» [5, 112], բայց սա դեռ ամենը չէ, վերջում խոստովանում է. «Չեմ հիշեր կոր, ... ես իմ «Հայր մեր»-ը չեմ հիշեր կոր...» [5, 163] (ընդգծումները մերն են՝ Ա.Պ.): Վերջ, սրանով ամեն ինչ ասված է, որովհետև հայի և, մասնավորապես, պոլսեցու համար մեր առաքելական եկեղեցին և տերունական աղոթքը ուղիղ համեմատական են հայ լինելուն:

Եվ մի ակնթարթ նա մեզ հառնում է որպես ոչ թե նահանջող, այլ նահանջած հայը:

Հրաչը ամբողջ էությանբ հայ է, արևելքցի, շատ է նեղվում եվրոպական բարքերից, ֆրանսուհիների մասին երբեք լավ կարծիք չի ունեցել, բայց այժմ ամուսնանում է անբարո վարքի տեր ֆրանսուհու՝ Սյուզանի հետ: Չավակին անվանակոչում են Սյուզանի հոր անունով՝ Ռենե, որովհետև «վարագույրները և մեջտեղի լամպարը ամբողջ ան նվիրեց, եթե հիմա անունը փոխենք, շատ պաղ կփախի...» [5, 146]:

Հայ մարդը և ընտանիքը մեծի, մասնավորապես՝ ծնողի պաշտամունք ունի, երեխային հայրական պապ ու տատի անունով կոչելու ավանդույթ:

Հրաչի հարսանիքի ժամանակ կենացներ են դատարկվում, բայց նրա ծնողները այդ կենացներից և ոչ մեկում չեն հիշատակվում: Եվ երբ Պետրոսն առաջարկում է նրանց կենացը, Հրաչը սկսում է հեկեկալ, «Սյուզան թաշկինակը կերկար երբ, անոր արցունքներն անգամ առնելու համար» [5, 147] (ընդգծումը մերն է՝

Ա.Պ.): Ամենաողբերգական կերպարներից մեկը Լոխումն է: Սա մոլեռանդ հայրենասեր սփյուռքահայ է, որ բողոք ունի՝ ուղղված «մարած մոխիրների» և «կաշվի վաճառականների» դեմ, ուզում է ուշքի բերել ժողովրդին, փրկել ուժացումից:

«Բ՞նչ, ի՞նչ, - կոռնար ան, - նորեն ֆրանսերեն թերթ, նորեն ֆրանսական թատրոն. Ատոնց հայերենը չկա՞: Չպիտի՞ ըլլա, որ դուք սանկ մեյ մը ցնցվիք, գիտակցիք մեր վիճակին, չպիտի ըլլա, որ կովիք, մաքառիք ձուլումին ու այլասերումին դեմ: ...Մենք ալ հայրենիք մը ունինք, պետք է պատրաստ կենանք հոն երթալու... ինչպե՞ս ձեզմե կայծ պիտի հանենք, երբոր ժամը հնչե, դուք, որ մարած մոխիրներ եք հիմա: Ուրկե կրակ պիտի գտնենք երթալու համար կովի, որովհետև այո՛, կռիվ պիտի ունենանք մենք, որքան ատեն որ տակավին ոտքի կաթողիկե մը ըլլա և ձյունագարդ գազաթ մը լեռան, որքան ատեն, որ մեր երակներուն մեջ արյունին հետ եռացող «մեր հայրենիք» մը ըլլա...» [5, 114]:

Սա «ակամա» նահանջող է և որպես այդպիսին միակն է: Բազում անգամներ փորձ է անում անցագիր ստանալ հայրենիք վերադառնալու համար, սակայն մերժվում է: Հեռանալ անկարող էր, հարմարվել՝ նույնպես: Իր այդ վիճակի սփոփանքը գտնում է ակոռոյի և թմրանյութերի մեջ, որոնք առանց այդ էլ ջղագրգիռ երիտասարդին հասցնում են խելագարության:

Այս անգամ նահանջը տեղի է ունենում ոչ թե գաղափարով, այլ ֆիզիկապես:

Միսաքը, ի տարբերություն Լոխումի, «կամա» նահանջող տիպն է: Իր օրապահիկը վաստակելով՝ հետամուտ է լինում ատամնաբուժական վարժարանում սովորելուն: Երբ ձեռք է բերում վկայականը, տեղափոխվում է Մարսել, բաժանվում հայ ընկերներից: Մարսելում նա պիտի դառնար մի սովորական ֆրանսիացի:

Այսօր էլ շատ մտավորականներ՝ գիտնականներ, գրողներ, բժիշկներ, լքում են հայրենիքը՝ օտար ափերում բարձր վարձատրվող աշխատանք ու փառք փնտրելով, մեկնաբանելով, որ այստեղ ապագա չկա, մոռանալով, որ իրենք են ապագա կերտողները:

Հասարակ շինականը մեկնում է արտագնա աշխատանքի, տարիներ անց պարզվում է, որ օտարագրի կին ու ընտանիք ունի: Շատերն էլ ընտանիքով մեկ օրում որոշում, վաճառում են հայրական տունը (այրելով հետդարձի կամուրջները) և առանց երկար-բարակ մտածելու, առանց որոշակի ծրագրերի՝ մեկնում: Այս օտարամոլությունը մեզանում նորություն չէ. «Մանասարս խելքը կորցրեց ճնճոց թևով տեղ հասած սիրագիր-հրավերի պատճառով և գնաց իր բախտի հետևից, Մհերս դարձավ Իսմիլ խաթունի տուն ու անկողնու յոթնամյա կենվորը, Դավիթս կուլ գնաց Չմշկիկ Սուլթանին... Չի փոխվել հայի որակը, փոխվել է որակական հատկանիշի արտահայտությունը» [6, 127]:

Պարզապես այս որակի արտահայտության համար կյանքը հաճախ մեզ պարարտ հող տրամադրեց պատերազմ, եղեռն, աքսոր...

Նահանջող է ոչ միայն սփյուռքահայը, այլև հայրենիքում ապրող հայ մարդը:

Այսօր մեզանում դժվար է հանդիպել երեխաների, որոնց անվանակոչել են Հայկանուշ, Վարդիթեր, Սիրանույշ, Հայկագն, Համբարձում, Վաղարշակ ու եթե հանդիպեն էլ, շատերի համար կարող են թվալ ծիծաղելի ու հնաբույր: Փոխարենը ամեն քայլի կարելի է հանդիպել արևմտյան, հիպերմոդերնի, մարկերի ու նրանց հպարտ մայրիկներին ու հայրիկներին:

Քիչ չեն երիտասարդները, որ քաղաքակիրթ երևալու համար օգտագործում են merci, ok, пока և այլ օտար բառեր:

Վարդավառի տոնն է կամաց-կամաց մոռացության մատնվում, էլ ուր մնացին Բարեկենդանը, Համբարձման տոնը, Սուրբ Սարգսի տոնը: Փոխարենը մեծ խանդավառությամբ նշվում է Սուրբ Վալենտինի տոնը, վերջերս կազմակերպվեց հնդկական Հոլիին նմանվող ինչ-որ գունավոր վագր: Փորձում ենք նմանակել Հելոուինի տոնի արարողություններն այն ժամանակ, երբ վաղուց մոռացվել է շվոտին դուրս անելու սովորույթը: Բայց ամենասարսափելին թերևս այն է, որ «Կտոր մը երկինք», «Մենք ենք, մեր սարերը», «Մեր մանկության տանգոն», «Գիքորը», «Հարսնացուն հյուսիսից» (այս շարքը կարելի է շարունակել) ֆիլմերը նկարած ազգի երիտասարդ մայրիկները զբաղված են պարզունակ ու տաղտկալի հնդկական սերիալներ դիտելով և չեն էլ նկատում, թե ինչպես են իրենց փոքրիկները մեծանում՝ առանց մայրիկի շուրթերից հայոց հեքիաթները լսելու, դիտելով անհոգի ու դաժանությամբ լի արտասահմանյան արտադրության մուլտֆիլմերը:

«Կնահանջեն ծնողք, որդի, քեռի, փեսա, կնահանջեն բարք, ըմբռում, բարոյական, սեր: Կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն, կնահանջե լեզուն: Եվ մենք դեռ կնահանջենք բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ. մեղա , մեղա՝ Արարատին: Եղան հայեր, որոնք իրենց մորթը փրկելու համար վճարեցին ոսկի, եղան ուրիշներ, որոնք տվին հավատք, կուսություն, եղան անոնք, որոնք լքեցին տուն, տեղ, երկինք, եղան դեռ վատեր, որ ուրացան ազգ ու լեզու, և հերոսներ, որ տվին արյուն, կյանք, օր ու արև: Իսկ մե՛նք, կվճարենք իբրև վերջին փրկագին այն, որ պիտի գա: Իբրև վերջին փրկագին՝ մանուկներ, որոնք կրնային մեծնալ, ապագայի սերունդներ, որոնք մեզմե վերջ պիտի գային: Որովհետև այն, որ պիտի գա, պիտի ըլլա օտար բանիվ և գործով, կամա և ակամա, գիտությամբ և անգիտությամբ, մեղա՛ , մեղա՛՝ Արարատին» [5, 110]: Սա տեղի էր ունենում սփյուռքում, այսօր տեղ է գտնում նաև հայրենիքում:

Թերևս տեղին է հայացք նետել դեպի միջնադար ու հիշել Քուչակի պատգամ-հորդորը.

Ես շեֆթալուի մորճ էի, ապառաժ քարին բուսնէի,
Եկին, քաշեցին, տարին, զիս այլոց այգին տընկեցին,
Շաքարն ալ շերպաթ արին, ու, բերին ինձի ջըրեցին,
Եկէք, զիս տեղըս տարէք ու ձընան ջըրով ջըրեցէ՛ք [7, 93]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազատյան Ե., Աննահանջ Շահնուրը, Նոր-դար, 3, 2004:
2. Ավագյան Ա., Պատկերազարդ պատմություն Շահան Շահնուրի, Երևան, 2004:
3. Գաբրիելյան Վ., Սփյուռքահայ գրականություն, Երևան, Երևանի համալսարանի հրատարակչություն, 1987:
4. Շահինյան Գ., Շահնուր՝ նորարար, Գրական թերթ, Երևան, 2003:
5. Շահնուր Շ., Երկեր երկու գրքով, գիրք 1, Երևան, 1982:
6. Փիլոյան Վ., Ժամանակի ձայները, «Լուսակն», Երևան, 2008:
7. Քուչակ Ն., Հարյուր և մեկ հայրեն, Երևան, Սովետական գրող, 1976:

Отступление в наши дни

Папinyan Ани

Резюме

Ключевые слова: *отступление, диаспора, эмигрант, отчуждение, актуальность, ассимиляция, язык, идея, нравы, борьба, армянин, родина*

В статье рассмотрен роман западноармянского писателя Шаана Шахнура «Отступление без музыки». Автор ссылается на исторические события, на их отражение на эпоху создания произведения в армянской литературе, на критику того времени, на отзывы читателей и на образы отступающих. Была проведена параллель с событиями наших дней.

Была выделена актуальность романа, вышедшая в свет в 20-е годы XX века, был отмечен факт национального отчуждения, на проявление которого часто воздействовали исторические факторы: война, геноцид, ссылка, а также другие факторы.

Заголовок «Отступление без музыки» выражает одну из важнейших проблем армянской судьбы – ассимиляция, разрушающая нацию эмиграция, которая продолжается и по сей день.

Отчуждение в нас самих имеет вековую историю и часто проявлялось в виде эмиграции, время от времени находя свое отражение в армянской литературе от «Сасна црер» до литературы наших дней. Отступление и сегодня реальность, и мы вынуждены признать, что отступающий не только армянин, живущий за пределами родины, но и армянин, который живет на родной земле, в своей родине, которому не обязательно быть носителем чужой культуры и чужих нравов, и который сам в праве выбирать между чужим и национальным.

The Retreat in Our Days

Papinyan Ani

Summary

Key words: *retreat, Diaspora, emigrant, assimilation, contemporaneity (modernity), blending, language, idea, customs, fight, foreignism, Armenian, homeland*

The article examines “Retreat Without Song” – a novel, written by Diasporan author Shahan Shahnour, including historical events surrounding the era before and in which the novel was written, their reflection in Armenian literature, related literary criticism and reader evaluation. A study of the “retreating” characters is conducted, with parallels drawn between them and the current reality. The relatability of this early 20th century novel is emphasized by focusing on the nation’s obsession with foreignism, often promoted by historical causes, such as war, genocide, exile, and other events.

The title – “Retreat Without Song”- reflects one of the cornerstone issues within the Armenian reality – the issue of assimilation, caused by continuous emigration.

The fascination with all things foreign, often carried out via emigration, is rooted deep within our history, thus being represented in ancient, as well as modern literary works. Retreat is part of our current reality, typical not only to the Diaspora, but also to the Armenians, born and living in the homeland – the Armenians who are free to choose between their own culture and that of others.